ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

11 փետրվարի 2025 թվական

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 02 ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 (տասնչորս) անդամներ:

Բացակա էր ավագանու անդամ Վալենտինա Կաղիյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:**

**Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:**

Նիստին ներկա էր Բյուրեղավան համայնքի Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերի վարչական ղեկավարներ Աղվան Հարությունյանն ու Բորիկ Դավթյանը, Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ Սարգիս Ղազարյանը:

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնհինգ անդամներից նիստին ներկա են տասնչորսը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

***Լսեցին***

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 02 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Բյուրեղավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 11-ի վեցերորդ նստաշրջանի հերթական թիվ 02 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացն սկսելու մասին:

2.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն (կամ անհամաձայնություն) տրամադրելու մասին:

3.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն (կամ անհամաձայնություն) տրամադրելու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 6

Որոշումն ընդունված է. /որոշում N 05-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

***<u>Լսեցին</u>***

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում 2025 թվականին սկսել մասնակցային բյուջետավորման գործընթաց:

2. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանվում են բոլոր ոլորտները:

3.Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն 16 տարին լրացած համայնքի յուրաքանչյուր բնակիչ՝ ինչպես անձամբ, այնպես էլ՝ հասարակական միավորումների և քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով:

4. Մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված յուրաքանչյուր սուբվենցիոն ծրագրի իրականացման համար համայնքի բյուջեում (ֆոնդային մասում) որպես ֆինանսավորման մասնաբաժին նախատեսել տվյալ ծրագրի համար հայցվող պետական ֆինանսավորման գումարի 20 տոկոսը:

5. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետով սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանում, բյուջեում և 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրում.

2)համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանու հավանությանը.

3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 6

Որոշումն ընդունված է. /որոշում N 06-Ա/

***Լսեցին***

***ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Հեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱՋԱՐՅԱՆ/*

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ և 29-րդ կետերի և հիմք ընդունելով հանրային լսման 2025 թվականի փետրվարի 03-ի N 01 արձանագրությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ Բյուրեղավան համայնքում գտնվող 07-051-0202-0042 կադաստրային ծածկագրով հողամասի տարածքում Ֆանտան-Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի 3-րդ տեղամասի օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության վերաբերյալ տրամադրել նախնական անհամաձայնություն:

2.Առաջարկել Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունն ու տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 6

Որոշումն ընդունված է. /որոշում N 07-Ա/

***<u>Լսեցին</u>***

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱՋԱՐՅԱՆ/

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ և 29-րդ կետերի և հիմք ընդունելով հանրային լսման 2025 թվականի փետրվարի 03-ի N 02 արձանագրությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ Բյուրեղավան համայնքում գտնվող 07-051-0202-0042 կադաստրային ծածկագրով հողամասի տարածքում Ֆանտան-Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի

1-ին տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման վերաբերյալ տրամադրել նախնական անհամաձայնություն:

2. Առաջարկել Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունն ու տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 08-Ա/

***<u>Լսեցին</u>***

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի մարտի 14 -ը, ժամը՝ 10:00-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 9 Դեմ - 0 Ձեռնպահ - 5

Որոշումն ընդունված է. /որոշում N 09-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը ներկայացրեց, որ՝ ի պատասխան իր կողմից ներկայացրած բացակայությունների մասին տեղեկանքի, Բյուրեղավան համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամներ Վլադիմիր Վարդևանյանը, Արշալույս Վարդանյանը, Աշխեն Մարուքյանն ու Ավագ Սահակյանը ներկայացրել են ավագանու նիստերից իրենց բացակայության պատճառների մասին:

2025թ. հունվարի 30-ին ներկայացրած գրությամբ ***Վլադիմիր Վարդևանյանը*** հայտնել է, որ՝

- ✓ 05.08.2024թ.-ին կայացած համայնքի ավագանու թիվ 11 արտահերթ նիստին չի ներկայացել անձնական ծանրաբեռնվածությամբ պայմանավորված:
- ✓ 10.09.2024թ.-ին կայացած համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի թիվ 13 հերթական նիստին չի ներկայացել աշխատանքային ժամերի հետ անհամատեղելիության պատճառով:

2025թ. հունվարի 30-ին ներկայացրած գրությամբ ***Արշալույս Վարդանյանը*** հայտնել է, որ՝

- ✓ 05.08.2024թ.-ին կայացած համայնքի ավագանու թիվ 11 արտահերթ նիստին չի ներկայացել քաղաքում չլինելու պատճառով:
- ✓ 29.08.2024թ.-ին կայացած համայնքի ավագանու թիվ 12 արտահերթ նիստին չի ներկայացել նոր ուսումնական տարվա կապակցությամբ աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով:
- ✓ 10.09.2024թ.-ին կայացած համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի թիվ 13 հերթական նիստին չի ներկայացել աշխատանքային ժամերի հետ անհամատեղելիության պատճառով:
- ✓ 04.10.2024թ.-ին կայացած համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի թիվ 14 արտահերթ նիստին չի ներկայացել անձնական ծանրաբեռնվածությամբ պայմանավորված:

2025թ. հունվարի 30-ին ներկայացրած գրությամբ ***Աշխեն Մարուքյանը*** հայտնել է, որ՝

- ✓ 05.08.2024թ.-ին կայացած համայնքի ավագանու թիվ 11 արտահերթ նիստին չի ներկայացվել անձնական ծանրաբեռնվածությամբ պայմանավորված:
- ✓ 29.08.2024թ.-ին կայացած համայնքի ավագանու թիվ 12 արտահերթ նիստին չի ներկայացվել նոր ուսումնական տարվա կապակցությամբ աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով:
- ✓ 10.09.2024թ.-ին կայացած համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի թիվ 13 հերթական նիստին չի ներկայացել աշխատանքային ժամերի հետ անհամատեղելիության պատճառով:

2025թ. հունվարի 30-ին ներկայացրած գրությամբ ***Ավագ Սահակյանը*** հայտնել է, որ՝

- ✓ 05.08.2024թ.-ին կայացած համայնքի ավագանու թիվ 11 արտահերթ նիստին չի ներկայացվել աշխատանքային ծանրաբեռնվածությամբ պայմանավորված:
- ✓ 29.08.2024թ.-ին կայացած համայնքի ավագանու թիվ 12 արտահերթ նիստին չի ներկայացվել երկրում չլինելու պատճառով:

- ✓ 10.09.2024թ.-ին կայացած համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի թիվ 13 հերթական նիստին չի ներկայացել աշխատանքային ծանրաբեռնվածությամբ պայմանավորված:

Բյուրեղավան համայնքի ավագանու «Միասնություն» խմբակցության անդամ ***Դանիել Դանիելյանը***՝ ի պատասխան բացակայությունների մասին տեղեկանքի, տեղեկացրել է, որ 10.09.2024թ.-ին կայացած համայնքի ավագանու 5-րդ նստաշրջանի հերթական թիվ 13 նիստին չի մասնակցել, քանի որ եղել է գործուղման մեջ:

Լիլիթ Ավուշյանը հայտնեց, որ Բյուրեղավան համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով ստեղծած ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ էդիկ Պիճիկյանը 2025 թվականի հունվարի 29-ին ներկայացրել է տեղեկանք այն մասին, որ ինքը և Արգամ Շառյանը հանձնաժողովի կայացած չորս նիստից բացակայություններ չեն ունեցել, Սերգեյ Սարգսյանը հանձնաժողովում ընդգրկվել է 29.08.2024 թ.-ից և մասնակցել է երեք նիստերին, իսկ Աշխեն Մարուքյանը և Արմեն Սարգսյանը բացակայել է երկու նիստերից (05.08.2024թ. և 04.10.2024թ.):

Բյուրեղավան համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով ստեղծած Սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ էդիկ Պիճիկյանը 2025 թվականի հունվարի 29-ին ներկայացրել է նիստերից ավագանու անդամների բացակայությունների մասին տեղեկանք, որում հայտնել է, որ ինքը և Վարդան Սուքիասյանը կայացած հինգ նիստերից չեն բացակայել, հանձնաժողովի քարտուղար Կարապետ Հարությունյանը բացակայել է մեկ նիստից (28.11.2024թ.), Վլադիմիր Վարդևանյանը և Վալենտինա Կաղիյանը բացակայել են չորս նիստերից (05.08.2024թ. 10.09.2024թ. , 04.10.2024թ. և 24.12.2024թ.), Ավագ Սահակյանը ոչ մի նիստի չի մասնակցել:

Բյուրեղավան համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով ստեղծած Գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արփինե Սուքիասյանը 2025 թվականի հունվարի 29-ին ներկայացրել

է նիստերից ավագանու անդամների բացակայությունների մասին տեղեկանք՝ հայտնելով, որ հինգերորդ նստաշրջանում հանձնաժողովը նիստեր չի հրավիրել:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ _____

ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ _____

ԱՐՓԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԷԴԻԿ ՊԻՃԻԿՅԱՆ _____

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ _____

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ _____

ԱՎԱԳ ՍԱՀԱԿՅԱՆ _____

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ԱՇԽԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ՍՈՍ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ